Պատրիարքությանը հուզող խնդիրների հաղթահարումը հանուն պատմական Ս. Աթոռի առաքելության առավել արդյունավետ իրագործման:

Այնուհետև Ֆրանսիայի Հայոց թեմի եւ Արեւմտյան Եւրոպայի Հայրապետական պատվիրակությանն առնչվող հարցերը ներկայացրեց Տ. Նորվան արքեպիսկոպոս Զաքարյանը: Սրբազան Հայրը զեկուցեց նաեւ Բենելյուքս երկրներում եկեղեցական կառույցների ձեւավորման ընթացքի մասին: Գոհունակությամբ ի գիտություն ընդունելով զեկույցը՝ Գերագույն հոգեւոր խորհուրդը հորդորեց շարունակել աշխատանքները:

Ժողովի ընթացքում քննության առնվեց Շվեցարիայում թեմական կյանքի վերակազմակերպման խնդիրը: Տեղեկացվեց, որ առաջիկայում Սյունյաց եւ Տավուշի փոխառաջնորդություններում կձեւավորվեն թեմական կառույցներ:

Նոյեմբերի երկրորդ կեսին Ամենայն Հայոց Կաթողիկոսի Վրաստան կատարելիք Հովվապետական այցի առնչությամբ լուսաբանություններ տվեց Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի պատասխանատու Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը: Տեղեկացվեց, որ նկատի առնելով Համայն Վրաստանի Պատրիարք-Կաթողիկոս Իլիա Երկրորդի արտասահմանում բուժումից հետո վերականգնողական շրջանի անհրաժեշտությունը եւ պատրիարքի ցանկությունը՝ ուղեկցելու Նորին Սրբությանը Թբիլիսի եւ Ջավախք միջեկեղեցական եւ հովվապետական այցելության ողջ ընթացքում՝ Վրաց Եկեղեցին դիմել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին վերանայելու Հայոց Հայրապետի Վրաստան այցի թվականը: Գերագույն հոգեւոր խորհուրդն ընդառաջ խնդրանքին հետաձգեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը Վրաստան՝ նկատի ունենալով հետաձգման վերաբերյալ նաեւ Վիրահայոց թեմի եւ Ջավախքի փոխառաջնորդության խնդրանքը:

Օրակարգում անդրադարձ կատարվեց նաեւ Հայաստանի Հանրապետությունում ամուսնալուծությունների եւ ժողովրդագրական աճի խնդիրներին: Այս առնչությամբ Գերագույն հոգեւոր խորհուրդը մտահոգություն արտահայտեց, ինչպես նաեւ քննարկեց այն ուղիները, որոնց միջոցով Հայոց Եկեղեցին կարող է նպաստել այդ խնդիրների հաղթահարմանը:

Ժողովը փակվեց Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ» աղոթքով:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԴԵՍՊԱՆԻՆ

Նոյեմբերի 17-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում Ուկրաինայի արտակարգ եւ լիազոր դեսպան Իվան Կուիտրային:

Նորին Սրբությունը շնորհավորեց նորանշանակ դեսպանին Հայաստան դիվանագիտական ծառայության գործուղվելու առիթով եւ բարի արդյունավորում մաղթեց նրա առաքելությանը:

Հանդիպման ընթացքում խոսվեց հայ-ուկրաինական հարաբերությունների եւ մշակութային կապերի զարգացման մասին, ինչպես նաեւ Ուկրաինայի հայ համայնքի եւ նրա կարեւոր դերակատարության մասին երկրի կյանքի տարբեր ոլորտներում: Անդրադարձ կատարվեց նաեւ երկու երկրների հոգեւոր կյանքին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՀ-ՈՒՄ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԻՆ

Նոյեմբերի 22-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Ֆրանսիայի Հանրապետության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Անրի Ռենոյին:

Նորին Սրբությունն անդրադարձավ այն կարեւոր ծառայությանը, որ դեսպանատունը կատարում է երկու բարեկամ երկրների հարաբերությունների սերտացման, զորացման եւ հետագա զարգացման համար: Հայոց Հայրապետը երախտագիտությամբ խոսեց նաեւ հայ ժողովրդի հանդեպ Ֆրանսիայի առանձնահատուկ վերաբերմունքի մասին՝ ի մասնավորի անդրադառնալով Ֆրանսիայի վճռական կեցվածքին Հայոց Ցեղասպանության ճանաչման եւ դատապարտման հարցում:

Իր հերթին պրն. Ռենոն նշեց, որ Հայոց Եկեղեցին հայ ժողովրդի ինքնության հզոր տարրերից մեկն է, որի զորեղ ուժով եւ դարավոր մաքառումների գնով է պայմանավորված հայ ազգի գոյությունը:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց նաեւ Եկեղեցու առջեւ ծառացած ներկայիս մարտահրավերներին եւ դրանց հաղթահարման ուղիներին, Ֆրանսիայի հայոց թեմին եւ հայ համայնքի կյանքին:

Զրույցի ավարտին Վեհափառ Հայրապետը դեսպանին մաղթեց բարի առաքելություն Հայաստանում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

«ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍՏ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿԻՆ ԴԻՎԱՆԱԳԵՏՆԵՐԻ ԵՒ ԴԻՎԱՆԱԳԵՏՆԵՐԻ ԿԱՆԱՆՑ ԱՍՈՑԱՑԻԱՅԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

Նոյեմբերի 24-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Բարի գալուստ Հայաստան» կին դիվանագետների եւ դիվանագետների կանանց ընկերակցության անդամներին՝ գլխավորությամբ ընկերակցության նախագահ տիկ. Նատալիա Նալբանդյանի: